ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IED0-D5E8-4987-B318 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ԵԴ2/4145/02/26

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

18 ապրիլի 2026թ.
ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «Մալկ» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի՝ թիվ ՀՀՇՄԳՀՀԿՀ-ՀԲՄԾՁԲ-31/26 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին 2026թ. ապրիլի 6-ի որոշումն անվավեր ճանաչելու և ընթացակարգն ընդհատված պահից շարունակելուն պարտավորեցնելու պահանջների մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Մալկ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2026թ. ապրիլի 14-ին

հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի՝ թիվ ՀՀՇՄԳՀՀԿՀ-ՀԲՄԾՁԲ-31/26 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին 2026թ. ապրիլի 6-ի որոշումն անվավեր ճանաչելու և ընթացակարգն ընդհատված պահից շարունակելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

Էլեկտրոնային եղանակով վարվող գործը դատավոր Գ. Վարդանյանին է մակագրվել 2026թ. ապրիլի 15-ին, իսկ Դատավորին հասանելի է դարձել 2026թ. ապրիլի 16-ին:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Մալկ» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի՝ թիվ ՀՀՇՄԳՀՀԿՀ-ՀԲՄԾՁԲ-31/26 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին 2026թ. ապրիլի 6-ի որոշումն անվավեր ճանաչելու և ընթացակարգն ընդհատված պահից շարունակելուն պարտավորեցնելու պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

Թիվ ԵԴ2/4145/02/26 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2026թ. մայիսի 15-ին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Գրիգորի Վարդանյան

Digitally signed by VARDANYAN GRIGORI 1507850611
Date: 2026.04.18 17:10:20 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am